

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

« ---- » « ----- » 2020թ.

N ---- Ն

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով և 33-րդ հոդվածի 4-րդ մասով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» N186-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) եկամուտների գումարը ավելացնել 1,700,652.8 հազար դրամով.
- 2) ծախսերի գումարն ավելացնել 9,248,098.4 հազար դրամով.
- 3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարը ավելացնել 7,547,445.6 հազար դրամով.

4) 2-րդ կետում «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ) ծրագրի իրականացման համար հատկացնել 9,228,174.6 հազար դրամ» բառերը փոխարինել «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ) իրականացման համար հատկացնել 9,233,794.8 հազար դրամ» բառերով.

5) NN 1-7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների.

6) N6 և N7 հավելվածներում «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)» բառերը փոխարինել «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)» բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ՝ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի եկամուտների մասում միջազգային կազմակերպություններից ստացված արտաքին պաշտոնական դրամաշնորհները՝ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար, ավելացնել 406,928.6 հազար դրամով՝ հիմք ընդունելով հ.NEAR-TS/2019/412-943 «Եվրոպական միության արտաքին գործողություններ» դրամաշնորհային պայմանագիրը՝ «Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ» աշխատանքների իրականացման համար:
- Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով ՀՀ պետական բյուջեից ստացվելիք գումարները ծրագրվել էին ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշներով, ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի (ՀՀ ԱԺ-ի կողմից հաստատված) և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու և գումար հատկացնելու մասին» N166-Ն որոշումների համաձայն՝ նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ պայմանավորված, պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների, հատկացվելիք սուբվենցիայի և ընթացիկ դրամաշնորհների գումարներում ըստ ծրագրերի կատարվել են ճշգրտումներ և փոփոխություններ, որի արդյունքում գումարները ավելացել են համապատասխանաբար 571,136.0, 62,587.7 և 660,000.5 հազար դրամով:

Նախագծով նախատեսվում է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեում կատարված վերը նշված բոլոր փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեում:

• Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեով համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվել էր 7,884,950.4 հազար դրամ, սակայն այն փաստացի կազմել է 15,432,396.0 հազար դրամ: Հաշվի առնելով փաստացի կատարողականի արդյունքները սույն որոշման նախագծով նախատեսվում է ճշգրտել տարեսկզբի ազատ մնացորդի գումարը 7,547,445.6 հազար դրամով և ուղղել 2019 թվականի պարտքերի մարմանը, որը վարչական բյուջեի մասով կազմում է 23,424.2 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեի մասով՝ 37,979.4 հազար դրամ, ինչպես նաև հետևյալ ծրագրերի իրականացմանը.

- Նախագծով առաջարկվում է «Կառավարման մարմնի պահպանում» ծրագրով նախատեսված գումարներն ավելացնել 7,256.6 հազար դրամով, որից՝ 6,381.6 հազար դրամն ուղղվել է 2019 թվականի պարտքերի մարմանը
- այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով 875.0 հազար դրամի ավելացում՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի դիմացի հատվածում գտնվող կանաչ տարածքների ոռոգման համար օգտագործվող խորքային պոմպի ձեռք բերման համար:
- Նախագծով առաջարկվում է «Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում» ծրագրին ավելացնել 46,699.3 հազար դրամ, որից 8,536.5 հազար դրամը որպես

պարտքի մարում, իսկ 38,162.8 հազար դրամը նոր ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքների համար:

- Նախագծով առաջարկվում է «Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում» ծրագրին ավելացնել 12,088.5 հազար դրամ, որից 3,922.4 հազար դրամը որպես պարտքի մարում, իսկ 8,166.1 հազար դրամը՝ Հալաբյան-Լենինգրադյան խաչմերուկի ստորգետնյա անցումի հիմնանորոգման աշխատանքները ավարտին հասցնելու համար:
- Նախագծով առաջարկվում է «Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում» ծրագրին ավելացնել 54,868.2 հազար դրամ, որից 1,700.0 հազար դրամը որպես պարտքի մարում, 21,498.0 հազար դրամը՝ թվով 11 լուսացուցային համակարգերի ձեռք բերման և տեղակայման աշխատանքների իրականացման համար, իսկ 31,670.2 հազար դրամը փողոցները, հրապարակները, այգիները նստարաններով և աղբամաններով կահավորելու համար:
- Նախագծով առաջարկվում է «Վերելակների հիմնանորոգում» ծրագրին ավելացնել 5,000,000.0 հազար դրամ, թվով 500 նոր վերելակների ձեռք բերման և տեղադրման աշխատանքների իրականացման համար:
- Նախագծով առաջարկվում է «Աղբահանություն և սանիտարական մաքրում» ծրագրով նախատեսված գումարներն ավելացնել 300,000.0 հազար դրամով՝ տրանսպորտային սարքավորումներ հոդվածով, Երևան քաղաքում աղբահանության, սանիտարական մաքրման և ձմռան ամիսներին ձնամաքման աշխատանքները պատշաճ և արդյունավետ իրականացնելու համար:
- Նախագծով առաջարկվում է 710,750.0 հազար դրամով ավելացնել «Կանաչ տարածքների հիմնում և պահպանում» ծրագիրը, նոր ստեղծված «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին աջակցելու, Երևան քաղաքում կանաչապատման աշխատանքները պատշաճ և արդյունավետ իրականացնելու և կանաչապատ Երևան ունենալու համար 14 անուն թվով 69 մեքենա-մեխանիզմներ և աղբի տեսակավորման սարքավորումներ ձեռք բերելու համար:
- Նախագծով առաջարկվում է 85,000.0 հազար դրամով ավելացնել «Թափառող կենդանիների վնասազերծում» ծրագիրը՝ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի սուբսիդավորման համար՝ ՀՈԱԿ-ի աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:
- Նախագծով առաջարկվում է 45,000.0 հազար դրամ հատկացնել Երևան քաղաքի ենթակայությամբ գործող պոլիկլինիկաներին թվով 350 համակարգիչներով (Լափթոփերով) ապահովելու համար, քանի որ առողջապահական համակարգը ամբողջությամբ անցել է էլեկտրոնային առողջապահության համակարգի և Երևանի ենթակայության պոլիկլինիկաներում՝ սկսած հերթագրումներից մինչև ԱԱՊ (առողջապահական ամբուլատոր պոլիկլինիկա) բժշկի և նեղ մասնագետների գրանցումը և հետագա բուժման վերաբերյալ տվյալների հավաքագրումը կատարվում է էլեկտրոնային առողջապահության (ARMED) ծրագրի միջոցով: Համակարգչով պետք է ապահովված լինեն ինչպես թերապևտները, այնպես էլ նեղ մասնագետները և լաբորատոր գործիքային բաժանմունքները: ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է թվով 546 համակարգիչ, որը չի բավարարում ամբողջ պահանջարկը:
- Նախագծով առաջարկվում է 234,819.8 հազար դրամով ավելացնել «Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում» ծրագիրը, որից 1,152.8 հազար դրամը որպես պարտքի մարում, 33,667.0 հազար դրամը հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցման և պահպանման, իսկ 200,000.0 հազար դրամը՝ Օդակաձև զբոսայգու 6-րդ հատվածում սքեյթ-պարկի հարակից տարածքի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացման համար, աշխատանքը փուլային է, որի նախագիծը գտնվում է մշակման փուլում և նախնական հաշվարկով կազմում է շուրջ 567,800.0 հազար դրամ:
- Նախագծով առաջարկվում է 137,702.3 հազար դրամ հատկացնել «Թատրոնների հիմնանորոգում» ծրագրին՝ Երևանի «Հրաչյա Ղափլանյանի անվան»

դրամատիկական թատրոնի դահլիճի բեմական լուսային և ձայնային համակարգերի վերազինման, անվտանգության և տեսանկարահանման ու ցուցադրական համակարգերի ձեռք բերման և տեղադրման, դահլիճի և ամֆիթատրոնի բազկաթոռների նորացման աշխատանքների, ինչպես նաև թատրոնի դահլիճի հարդարման սենյակների և մասամբ սրահի օղափոխության աշխատանքների իրականացման համար:

- Նախագծով առաջարկվում է 36,450.0 հազար դրամով ավելացնել «Նախադպրոցական ուսուցում» ծրագիրը՝ Նոր Նորք վարչական շրջանում թիվ 103 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում և թիվ 119 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում նոր 1-ական խմբերի բացման համար և Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի թիվ 92 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հատուկ խմբերում մասնագիտական ներառական կրթություն իրականացնելու համար:

- Նախագծով նախատեսվում է վարչական մասի պահուստային ֆոնդը ավելացնել 536,004.6 հազար դրամով, նաև ձևավորել ֆոնդային մասի պահուստային ֆոնդ՝ 966,716.7 հազ. դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 186-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ N 1**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ N 2

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի եկամուտները ավելանում են 1,700,652.8 հազար դրամով, ծախսերը ավելանում են 9,248,098.4 հազար դրամով, դեֆիցիտը ավելանում է 7,547,445.6 հազար դրամով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*(հազար դրամներով)*

Տողի N-ը	Եկամտատեսակները	Հոդվածի N-ը	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b> (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝		1,700,652.8	1,700,652.8	-
1200	<b>2. ՊԼԵՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ</b> (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝	7300	1,129,516.8	1,129,516.8	-
1230	<b>2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից,</b> այդ թվում՝	7321	406,928.6	406,928.6	-
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		406,928.6	406,928.6	
1250	<b>2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից</b> (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256) որից՝	7331	722,588.2	722,588.2	-
1252	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1253 + տող 1254) այդ թվում՝		660,000.5	660,000.5	-
1254	Այլ դոտացիաներ		660,000.5	660,000.5	
1255	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		62,587.7	62,587.7	
1300	<b>3. ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b> (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝	7400	571,136.0	571,136.0	-
1340	<b>3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից</b> (տող 1341 + տող 1342 + տող 1343) այդ թվում՝	7421	571,136.0	571,136.0	-
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		571,136.0	571,136.0	

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2  
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				<b>ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>9,248,098.4</b>	<b>1,724,077.0</b>	<b>7,524,021.4</b>
2100	01	0	0	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>9,696.6</b>	<b>6,381.6</b>	<b>3,315.0</b>
				այդ թվում՝			
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>	7,256.6	6,381.6	875.0
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	7,256.6	6,381.6	875.0
2150	01	5	0	<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ</i>	2,440.0	-	2,440.0
				որից՝			
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	2,440.0	-	2,440.0
2200	02	0	0	<b>ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>4,680.0</b>	<b>4,680.0</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
2250	02	5	0	<i>Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</i>	4,680.0	4,680.0	-
				որից՝			
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	4,680.0	4,680.0	-
2400	04	0	0	<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>5,249,330.1</b>	<b>145,814.6</b>	<b>5,103,515.5</b>
				այդ թվում՝			
2420	04	2	0	<i>Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն</i>	46,699.3	-	46,699.3
				որից՝			
2424	04	2	4	Ոռոգում	46,699.3	-	46,699.3
2450	04	5	0	<b>Տրանսպորտ</b>	<b>5,200,905.8</b>	<b>145,518.2</b>	<b>5,055,387.6</b>
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	71,180.4	15,792.8	55,387.6
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	5,129,725.4	129,725.4	5,000,000.0
2490	04	9	0	<i>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)</i>	1,725.0	296.4	1,428.6
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	1,725.0	296.4	1,428.6
2500	05	0	0	<b>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>1,690,938.7</b>	<b>678,592.2</b>	<b>1,012,346.5</b>
				այդ թվում՝			
2510	05	1	0	<i>Աղբահանում</i>	488,013.7	186,663.6	301,350.1



Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				որից՝			
2511	05	1	1	Աղբահանում	488,013.7	186,663.6	301,350.1
2520	05	2	0	<b>Կեղտաջրերի հեռացում</b>	<b>246.4</b>	<b>-</b>	<b>246.4</b>
				որից՝			
3521	05	2	1	Կեղտաջրերի հեռացում	246.4	-	246.4
2560	05	6	0	<b>Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>	<b>1,202,678.6</b>	<b>491,928.6</b>	<b>710,750.0</b>
				որից՝			
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	1,202,678.6	491,928.6	710,750.0
2600	06	0	0	<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</b>	<b>33,423.9</b>	<b>14,211.3</b>	<b>19,212.6</b>
				այդ թվում՝			
2640	06	4	0	<b>Փողոցների լուսավորում</b>	<b>14,183.8</b>	<b>14,183.8</b>	<b>-</b>
				որից՝			
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	14,183.8	14,183.8	-
2660	06	6	0	<b>Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)</b>	<b>19,240.1</b>	<b>27.5</b>	<b>19,212.6</b>
				որից՝			
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	19,240.1	27.5	19,212.6
2700	07	0	0	<b>ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>	<b>45,306.0</b>	<b>-</b>	<b>45,306.0</b>
				այդ թվում՝			
2760	07	6	0	<b>Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)</b>	<b>45,306.0</b>	<b>-</b>	<b>45,306.0</b>
				որից՝			
2761	07	6	1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	45,306.0	-	45,306.0
2800	08	0	0	<b>ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ</b>	<b>404,316.1</b>	<b>31,794.0</b>	<b>372,522.1</b>
				այդ թվում՝			
2810	08	1	0	<b>Հանգստի և սպորտի ծառայություններ</b>	<b>234,819.8</b>	<b>-</b>	<b>234,819.8</b>
				որից՝			
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	234,819.8	-	234,819.8
2820	08	2	0	<b>Մշակութային ծառայություններ</b>	<b>169,496.3</b>	<b>31,794.0</b>	<b>137,702.3</b>
				որից՝			
2821	08	2	2	Թանգարաններ և ցուցասրահներ	7,127.4	7,127.4	-
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	362.9	362.9	-
2825	08	2	5	Արվեստ	162,006.0	24,303.7	137,702.3
2900	09	0	0	<b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>	<b>300,289.4</b>	<b>299,202.4</b>	<b>1,087.0</b>
				այդ թվում՝			
2910	09	1	0	<b>Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն</b>	<b>145,851.3</b>	<b>145,851.3</b>	<b>-</b>
				որից՝			
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	36,450.0	36,450.0	-
2911	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն	109,401.3	109,401.3	-
2920	09	2	0	<b>Միջնակարգ ընդհանուր կրթություն</b>	<b>153,351.1</b>	<b>153,351.1</b>	<b>-</b>
				որից՝			
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	138,349.1	138,349.1	-
2922	09	2	2	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն	15,002.0	15,002.0	-
2960	09	6	0	<b>Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ</b>	<b>1,087.0</b>	<b>-</b>	<b>1,087.0</b>

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				որից՝			
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	1,087.0	-	1,087.0
3000	10	0	0	<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>7,396.3</b>	<b>7,396.3</b>	<b>-</b>
				այդ թվում՝			
3090	10	9	0	<b>Մոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>	<b>7,396.3</b>	<b>7,396.3</b>	<b>-</b>
				որից՝			
3092	10	9	2	Մոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	7,396.3	7,396.3	-
3100	11	0	0	<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՏԱՑՅԻՆ ՖՈՆԴԵՐ</b>	<b>1,502,721.3</b>	<b>536,004.6</b>	<b>966,716.7</b>
				այդ թվում՝			
3110	11	1	0	<b>ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ</b>	<b>1,502,721.3</b>	<b>536,004.6</b>	<b>966,716.7</b>
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	1,502,721.3	536,004.6	966,716.7

**Հավելված N 3**  
**Երևան քաղաքի ավագանու**  
**2020 թվականի \_\_\_\_\_-ի**  
**N \_\_\_\_\_ - Ն որոշման**

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3**  
**ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*(հազար դրամներով)*

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>		<b>9,248,098.4</b>	<b>1,724,077.0</b>	<b>7,524,021.4</b>
	այդ թվում՝				
4050	<b>Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝</b>	x	<b>1,724,077.0</b>	<b>1,724,077.0</b>	<b>966,716.7</b>
	այդ թվում՝				
4100	<b>1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ</b>	x	<b>5,687.6</b>	<b>5,687.6</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
4110	<b>ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ</b>	x	<b>5,687.6</b>	<b>5,687.6</b>	<b>-</b>
	որից՝				
4112	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	5,687.6	5,687.6	-
4200	<b>1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉԵՌՔ ԲԵՐՈՒՄ</b>	x	<b>25,902.7</b>	<b>25,902.7</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
4210	<b>ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>7,865.3</b>	<b>7,865.3</b>	<b>-</b>
	որից՝				
4215	- Ապահովագրական ծախսեր	4215	7,865.3	7,865.3	-
4230	<b>ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՌՔ ԲԵՐՈՒՄ</b>	x	<b>5,200.0</b>	<b>5,200.0</b>	<b>-</b>
	որից՝				
4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	5,200.0	5,200.0	-
4250	<b>ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)</b>	x	<b>12,837.4</b>	<b>12,837.4</b>	<b>-</b>
	որից՝				
4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	12,552.4	12,552.4	-
4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	285.0	285.0	-
4400	<b>1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ</b>	x	<b>492,931.9</b>	<b>492,931.9</b>	<b>-</b>
	այդ թվում՝				
4410	<b>ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ</b>	x	<b>492,931.9</b>	<b>492,931.9</b>	<b>-</b>
	որից՝				
4411	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	488,251.9	488,251.9	-
4412	- Սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4512	4,680.0	4,680.0	-
4700	<b>1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>2,166,271.5</b>	<b>1,199,554.8</b>	<b>966,716.7</b>

Տարի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
	այդ թվում՝				
4760	<b>ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>663,550.2</b>	<b>663,550.2</b>	-
	որից՝				
4761	-Այլ ծախսեր	4861	663,550.2	663,550.2	-
4770	<b>ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	x	<b>1,502,721.3</b>	<b>536,004.6</b>	<b>966,716.7</b>
	որից՝				
4771	-Պահուստային միջոցներ	4891	1,502,721.3	536,004.6	966,716.7
5000	<b>Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ</b>	x	<b>6,557,304.7</b>	-	<b>6,557,304.7</b>
	այդ թվում՝				
5100	<b>1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	x	<b>6,555,604.7</b>	-	<b>6,555,604.7</b>
	այդ թվում՝				
5110	<b>ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	x	<b>442,021.4</b>	-	<b>442,021.4</b>
	որից՝				
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	82,337.5	-	82,337.5
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	359,683.9	-	359,683.9
5120	<b>ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ</b>	x	<b>6,109,793.2</b>	-	<b>6,109,793.2</b>
	որից՝				
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	1,010,750.0	-	1,010,750.0
5122	- Վարչական սարքավորումներ	5122	45,000.0	-	45,000.0
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	5,054,043.2	-	5,054,043.2
5130	<b>ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	x	<b>3,790.1</b>	-	<b>3,790.1</b>
	որից՝				
5132	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	1,350.1	-	1,350.1
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	2,440.0	-	2,440.0
5200	<b>1.2 ՊԱՇԱՐՆԵՐ</b>	x	<b>1,700.0</b>	-	<b>1,700.0</b>
	այդ թվում՝				
5221	- Նյութեր և պարագաներ	5221	1,700.0	-	1,700.0

Հավելված N 4  
 Երևան քաղաքի ավագանու  
 2020 թվականի \_\_\_\_\_-ի  
 N \_\_\_\_\_ - Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ N 4  
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*(հազար դրամներով)*

Տողի NN		Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
			վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՍԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	(7,547,445.6)	(23,424.2)	(7,524,021.4)

Հավելված N 5  
 Երևան քաղաքի ավագանու  
 2020 թվականի \_\_\_\_\_-ի  
 N \_\_\_\_\_ - Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5  
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են նրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
8010	<b>ԸՆԴԱՍԵՆԸ՝</b>		<b>7,547,445.6</b>	<b>23,424.2</b>	<b>7,524,021.4</b>
	այդ թվում՝				
8100	<b>Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</b>		7,547,445.6	23,424.2	7,524,021.4
	այդ թվում՝				
8160	<b>2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		7,547,445.6	23,424.2	7,524,021.4
	այդ թվում՝				
8190	<b>2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ՝</b>		<b>7,547,445.6</b>	<b>23,424.2</b>	<b>7,524,021.4</b>
	այդ թվում՝				
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ	9320	6,427,887.4	6,427,887.4	-
	որից՝				
8192	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված՝ առկա պարտավորությունների կատարմանը		23,424.2	23,424.2	-
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս		6,404,463.2	6,404,463.2	-
8194	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ	9330	7,524,021.4	-	7,524,021.4
	որից՝				
8195	- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի		1,119,558.2	-	1,119,558.2
8196	- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը		6,404,463.2	-	6,404,463.2

**ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>		<b>9,248,098.4</b>	<b>1,724,077.0</b>	<b>7,524,021.4</b>
2100	01	0	0	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>9,696.6</b>	<b>6,381.6</b>	<b>3,315.0</b>
				այդ թվում՝				
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>		<b>7,256.6</b>	<b>6,381.6</b>	<b>875.0</b>
				որից՝				
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում		7,256.6	6,381.6	875.0
				այդ թվում՝				
				<b><u>1. Կառավարման մարմնի պահպանում</u></b>		<b>7,256.6</b>	<b>6,381.6</b>	<b>875.0</b>
				- Պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	5,687.6	5,687.6	-
				- Ապահովագրական ծախսեր	4215	469.0	469.0	-
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	225.0	225.0	-
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	875.0	-	875.0
2150	01	5	0	<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ</i>		<b>2,440.0</b>	-	<b>2,440.0</b>
				որից՝		-	-	-
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		2,440.0	-	2,440.0
				այդ թվում՝		-	-	-
				<b><u>1. Նախագծային աշխատանքներ</u></b>		<b>2,440.0</b>	-	<b>2,440.0</b>
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	2,440.0	-	2,440.0
2200	02	0	0	<b>ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		<b>4,680.0</b>	<b>4,680.0</b>	-
				այդ թվում՝		-	-	-
2250	02	5	0	<i>Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</i>		<b>4,680.0</b>	<b>4,680.0</b>	-
				որից՝		-	-	-
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		4,680.0	4,680.0	-
				այդ թվում՝		-	-	-
				<b><u>2. Այրմտրանքային աշխատանքային ծառայության իրականացում</u></b>		<b>4,680.0</b>	<b>4,680.0</b>	-
				- Սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4512	4,680.0	4,680.0	-
2400	04	0	0	<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>5,249,330.1</b>	<b>145,814.6</b>	<b>5,103,515.5</b>
				այդ թվում՝				
2420	04	2	0	<i>Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն</i>		<b>46,699.3</b>	-	<b>46,699.3</b>
				որից՝		-	-	-
2424	04	2	4	Ոռոգում		46,699.3	-	46,699.3
				այդ թվում՝		-	-	-
				<b><u>1. Ոռոգման զանգի կառուցում և վերանորոգում</u></b>		<b>46,699.3</b>	-	<b>46,699.3</b>
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	46,699.3	-	46,699.3
2450	04	5	0	<i>Տրանսպորտ</i>		<b>5,200,905.8</b>	<b>145,518.2</b>	<b>5,055,387.6</b>
				որից՝				
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ		71,180.4	15,792.8	55,387.6
				այդ թվում՝				

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոսիված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<b>3. Եզրաքարերի վերանորոգում</b>		<b>536.0</b>	<b>140.0</b>	<b>396.0</b>
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	140.0	140.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	396.0	-	396.0
				<b>5. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում</b>		<b>12,088.5</b>	<b>12,088.5</b>	<b>-</b>
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	12,088.5	12,088.5	-
				<b>8. Մալրոտիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում</b>		<b>123.4</b>	<b>-</b>	<b>123.4</b>
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	123.4	-	123.4
				<b>12. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված յազորություններ)</b>		<b>1,692,576.1</b>	<b>1,692,576.1</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	1,692,576.1	1,692,576.1	-
				<b>13. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում</b>		<b>54,868.2</b>	<b>-</b>	<b>54,868.2</b>
				-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	53,168.2	-	53,168.2
				-Նյութեր և պարագաներ	5221	1,700.0	-	1,700.0
				<b>14. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված յազորություններ)</b>		<b>(1,690,212.9)</b>	<b>(1,690,212.9)</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	(1,690,212.9)	(1,690,212.9)	-
				<b>15. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված յազորություններ)</b>		<b>1,201.1</b>	<b>1,201.1</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	1,201.1	1,201.1	-
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ		5,129,725.4	129,725.4	5,000,000.0
				այդ թվում՝				
				<b>1. Վերելակների հիմնանորոգում</b>		<b>5,000,000.0</b>	<b>-</b>	<b>5,000,000.0</b>
				-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	5,000,000.0	-	5,000,000.0
				<b>2. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված յազորություններ)</b>		<b>46,141.8</b>	<b>46,141.8</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	46,141.8	46,141.8	-
				<b>3. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն</b>		<b>26,113.7</b>	<b>26,113.7</b>	<b>-</b>
				-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	26,113.7	26,113.7	-
				<b>4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված յազորություններ)</b>		<b>6,087.5</b>	<b>6,087.5</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	6,087.5	6,087.5	-
				<b>5. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված յազորություններ)</b>		<b>26,404.4</b>	<b>26,404.4</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	26,404.4	26,404.4	-
				<b>6. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված յազորություններ)</b>		<b>24,978.0</b>	<b>24,978.0</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	24,978.0	24,978.0	-
2490	04	9	0	<b>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)</b>		<b>1,725.0</b>	<b>296.4</b>	<b>1,428.6</b>
				որից՝				
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)		1,725.0	296.4	1,428.6
				այդ թվում՝				



Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոսիված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				<b>12. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում</b>		<b>296.4</b>	<b>296.4</b>	<b>-</b>
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	296.4	296.4	-
				<b>13. Երևան տրանս ՓԲԸ-ի տարածքում մեքենաների փակ կալանատեղի կառուցում</b>		<b>1,428.6</b>	<b>-</b>	<b>1,428.6</b>
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1,428.6	-	1,428.6
2500	05	0	0	<b>ԵՐԶԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		<b>1,690,938.7</b>	<b>678,592.2</b>	<b>1,012,346.5</b>
				այդ թվում՝				
2510	05	1	0	<b>Աղբահանում</b>		<b>488,013.7</b>	<b>186,663.6</b>	<b>301,350.1</b>
				որից՝				
2511	05	1	1	Աղբահանում		488,013.7	186,663.6	301,350.1
				այդ թվում՝				
				<b>1. Աղբահանություն և սանիտարական մաքրում</b>		<b>300,000.0</b>	<b>-</b>	<b>300,000.0</b>
				- Տրանսպորտային սարքավորումներ	5121	300,000.0	-	300,000.0
				<b>3. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>9,121.8</b>	<b>9,121.8</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	9,121.8	9,121.8	-
				<b>4. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>53,272.9</b>	<b>53,272.9</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	53,272.9	53,272.9	-
				<b>5. Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>52,588.8</b>	<b>52,588.8</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	52,588.8	52,588.8	-
				<b>6. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>13,147.2</b>	<b>13,147.2</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	13,147.2	13,147.2	-
				<b>7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>53,272.9</b>	<b>53,272.9</b>	<b>-</b>
				-Այլ ծախսեր	4861	53,272.9	53,272.9	-
				<b>8. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր</b>		<b>6,610.1</b>	<b>5,260.0</b>	<b>1,350.1</b>
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	5,200.0	5,200.0	-
				-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	60.0	60.0	-
				-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	1,350.1	-	1,350.1
2520	05	2	0	<b>Կեղտաջրերի հեռացում</b>		<b>246.4</b>	<b>-</b>	<b>246.4</b>
				որից՝				
2521	05	2	1	Կեղտաջրերի հեռացում		246.4	-	246.4
				այդ թվում՝				
				<b>1. Ջրահեռացման կոմունիկացիոն գանգերի կառուցում</b>		<b>246.4</b>	<b>-</b>	<b>246.4</b>
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	246.4	-	246.4
2560	05	6	0	<b>Երջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</b>		<b>1,202,678.6</b>	<b>491,928.6</b>	<b>710,750.0</b>
				որից՝				
2561	05	6	1	Երջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		1,202,678.6	491,928.6	710,750.0

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				այդ թվում՝				
				<b>1. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում</b>		<b>710,750.0</b>	-	<b>710,750.0</b>
				- Տրանսպորտային սարքավորումներ	5121	710,750.0	-	710,750.0
				<b>4. Թափառող կենդանիների վնասագերծում</b>		<b>85,000.0</b>	<b>85,000.0</b>	-
				-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	85,000.0	85,000.0	-
				<b>5. «Երևան, Վարշավա, Տիրանա մարտադարանների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ» աշխատանքների իրականացում</b>		<b>406,928.6</b>	<b>406,928.6</b>	-
				-Այլ ծախսեր	4861	406,928.6	406,928.6	-
2600	06	0	0	<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՏՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</b>		<b>33,423.9</b>	<b>14,211.3</b>	<b>19,212.6</b>
				այդ թվում՝				
2640	06	4	0	<b>Փողոցների լուսավորում</b>		<b>14,183.8</b>	<b>14,183.8</b>	-
				որից՝				
2641	06	4	1	Փողոցների լուսավորում		14,183.8	14,183.8	-
				այդ թվում՝				
				<b>3. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>2,826.2</b>	<b>2,826.2</b>	-
				-Այլ ծախսեր	4861	2,826.2	2,826.2	-
				<b>4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>1,080.8</b>	<b>1,080.8</b>	-
				-Այլ ծախսեր	4861	1,080.8	1,080.8	-
				<b>5. Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</b>		<b>10,276.8</b>	<b>10,276.8</b>	-
				-Այլ ծախսեր	4861	10,276.8	10,276.8	-
2660	06	6	0	<b>Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)</b>		<b>19,240.1</b>	<b>27.5</b>	<b>19,212.6</b>
				որից՝				
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		19,240.1	27.5	19,212.6
				այդ թվում՝				
				<b>1. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում</b>		<b>27.5</b>	<b>27.5</b>	-
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	27.5	27.5	-
				<b>2. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում</b>		<b>96.0</b>	-	<b>96.0</b>
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	96.0	-	96.0
				<b>3. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում</b>		<b>17,460.5</b>	-	<b>17,460.5</b>
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	17,460.5	-	17,460.5
				<b>4. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ</b>		<b>1,587.1</b>	-	<b>1,587.1</b>
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	1,587.1	-	1,587.1
				<b>8. Վթարային պատշգամբների նորոգում</b>		<b>69.0</b>	-	<b>69.0</b>
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	69.0	-	69.0
2700	07	0	0	<b>ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>		<b>45,306.0</b>	-	<b>45,306.0</b>
				այդ թվում՝		-	-	-
2760	07	6	0	<b>Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)</b>		<b>45,306.0</b>	-	<b>45,306.0</b>
				որից՝		-	-	-
2761	07	6	1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր		45,306.0	-	45,306.0
				այդ թվում՝		-	-	-
				<b>1. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում</b>		<b>306.0</b>	-	<b>306.0</b>

Տարի NN	Բաժին	Խումբ	Գաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոսիված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	306.0	-	306.0
				<b><u>3. Առողջապահական կազմակերպությունների համար գույքի ձեռք բերում</u></b>		<b>45,000.0</b>	-	<b>45,000.0</b>
				-վարչական սարքավորումներ	5122	45,000.0	-	45,000.0
